# ԱԺ հունիսի 7-ի հերթական ընտրությունների «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության Նախընտրական ծրագիրը

## Գաղափարական հենք

Հայաստանի քաղաքական վերածննդի և Արցախի ազատագրման գաղափարական հիմքերը դրվել են դեռ 20-րդ դարի կեսերին, մի ժամանակաշրջան, որը կարելի է բնորոշել որպես ազգային զարթոնքի և քաղաքական ազգի ձևավորման յուրատեսակ սկիզբ: Այն դարձավ բեկումնային և հիմք դրեց ռազմավարական փոփոխությունների մի գործընթացի, որը կարելի է բնորոշել որպես ինքնության խորքային վերաիմաստավորման և վերարժևորման սկիզբ: Այն արտահայտվում էր ինչպես մշակույթում և գիտությունում, այնպես էլ հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: **Հայը վերարժևորեց իրեն, իր նպատակներն ու դրանց տանող ճանապարհները, և ամենակարևորը, գիտակցեց սեփական ճակատագրում բացառապես իր դերի գերակայությունը:** Պատահական չէ, որ հենց 1965թ. նկարահանվեց Ֆրունզե Դովլաթյանի «Բարև, ես եմ» ֆիլմը, որը մասնակցեց նաև 1966թ. Կաննի կինոփառատոնին և ներկայացվեց «Ոսկե արմավենու ճյուղի»:

**Երկար ընդմիջումից հետո Հայը աշխարհին հայտ ներկայացրեց՝ ասելով «ԵՍ ԿԱՄ»:** Այդ սերունդը, իր բովանդակությամբ անկախության սերունդ էր, որը, ճեղքելով անզորության պատրանքները, մարտահրավեր նետելով գերտերություններին և կառուցակարգերին, արդյունքում ազատագրելով նաև Արցախը՝ ձեռք բերեց իր տեղն ու դերը նոր ձևավորվող աշխարհակարգում: Սակայն անկախ պետականության ողջ ժամանակաշրջանում, երբ ստեղծված էին աննախադեպ պատմական պայմաններ շարունակական զարգացման և հզորացման համար, երբ պետք է առավել ամրապնդվեր ազգային ինքնությունն ու պետության սուբեկտայնությունը՝

արժևորելով ազգի և պետության պատմական դերակատարումը, երբ նույնիսկ աշխարհի տարբեր անկյուններում բնակվող մարդիկ, որոնք ունենին հեռավոր հայ ազգականներ, սկսեցին իրենց նույնացնել ՀԱՅի հետ, քանի որ հայը վեր էր հառնել մոխրից, հայը դարձել էր հաղթող և սկսել իր արժանապատիվ ու հավակնոտ ընթացքը, տեղի ունեցավ ճիշտ հակառակը: Քաղաքական վերնախավերի կողմից մսխվեց ողջ նյութական և ոչ նյութական ռեսուրսն ու ներուժը՝ արդյունաբերությունից մինչև գիտություն և կառավարում, միևնույն ժամանակ վերադառնալով և ամրապնդելով հպատակային քաղաքականությունը թե ներքին և թե արտաքին մակարդակներում: Սակայն այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է նաև փաստել, որ **երրորդ հանրապետությունը ձևավորվեց ոչ թե մեր գիտակցված և արժևորված երկարատև ազգային պայքարի արդյունքում, այլ մեր կամքից անկախ՝ աշխարհաքաղաքական կերպափոխումների և ԽՍՀՄ փլուզման արդյունքում, որն էլ իր ամուր դրոշմը դրեց քաղաքական վերնախավի ձևավորման ուղիների և որակի, ինչպես նաև պետության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի վրա:**

Անկախության հռչակմամբ Հայաստանի Հանրապետությունում սկիզբ դրվեց ազատականացման և ժողովրդավարացման գործընթացին, որն առաջին հայացքից համահունչ էր ձևավորվող նոր աշխարհակարգին և պետք է երաշխավորեր պետության անվտանգությունն ու շարունակական զարգացումը: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ ազատականացման և ժողովրդավարացման համընդհանուր մոդելի ուղղակի կիրառումն առանց ազգային, սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական և աշխարհաքաղաքական առանձնահատկությունների համարժեք հաշվառման և մերժելով բնականոն զարգացման տրամաբանությունը, ոչ միայն չի երաշխավորում պետության անվտանգությունը, զարգացումն ու միջազգային ինտեգրումը, այլև հանգեցնում է խորքային և բազմամակարդակ ճգնաժամերի, ընդհուպ՝ պետության տապալման: Այս հարացույցի ներդրման հետևանքով **ՀՀ-ում շարունակաբար տեղի է ունեցել գիտական և կրթական համակարգերի խարխլում, սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացում, անարդյունավետ պետական**

**կառավարման համակարգի ձևավորում, մշակութային համահարթեցում, որոնք, ուղեկցվելով քաղաքական վերնախավի՝ բացառապես սպառողական արժեքների գերակայությամբ, հանգեցրել են ինչպես ինքնության և սահմանադրականության ճգնաժամի, այնպես էլ՝ հանրային և պետական ռազմավարական շահի ռացիոնալ ընկալման անկարողության:** Այս գործընթացները, հիմնականում ուղեկցվելով լեգիտիմության ճգնաժամով, անմիջականորեն արտացոլվել են նաև ՀՀ կողմից իրականացվող արտաքին քաղաքականության ձևի և բովանդակության վրա: Այն ուղղակի ազդեցություն է ունեցել նաև սփյուռքի հետ հարաբերություններեի տրամաբանության, որակի և բովանդակության վրա: Փաստացի մերժվել է համահայկականության գաղափարը, իսկ սփյուռքի հետ հարաբերությունները ձևավորվել են ոչ թե փոխգործակցության և ինստիտուցիոնալացման սկզբունքով, այլ այն դիտարկվել է, որպես դրամական օգնության աղբյուր, որտեղ հիմնականում անտեսվել է սփյուռքի ողջ ներուժն ու բացառվել նրա մասնակցությունը պետականաշինության գործում:

Ակնհայտ է, որ ՀՀ-ում ազգային ինստիտուտների բացակայության, անպատասխանատու ազատականացման, վեստերնիզացման և հանրային կյանքի կազմակերպման համընդհանուր մոդելների մեխանիկորեն ներդրման հետևանքով չի ապահովվել ինստիտուտների գործունեության արդյունավետությունն ու բնականոն արդիականացումը: Իսկ ինստիտուտների անհամապատասխանությունն ու անարդյունավետությունը արդարացվել են միայն դրանց «միջազգային լավագույն փորձին» համապատասխան լինելու հիմնավորումով և ոչ թե դրանց գործունեության արդյունքում ձևավորված հանրային բարիքի միջոցով:

Այսպիսով՝ անկախացումից հետո ՀՀ-ում իրականացվող քաղաքականության հիմքում դրվեց և ամրապնդվեց ձևը, բայց ոչ երբեք բովանդակությունը: Այս ժամանակահատվածում տեղի ունեցավ ոչ թե պետականաշինություն, որի հիմքում ընկած կլիներ ազգային ու պետական շահը, այլ ուրիշ պետությունների ձևի կրկնօրինակում, որն ուղեկցվում էր քաղաքական վերնախավի կողմից ազգային

ներուժի մսխման և պետության ռեսուրսների անխնա յուրացմամբ: Հենց այս կործանարար երևույթների համակարգային և շարունակական դրսևորումները հանգեցրին ինչպես քաղաքական, այնպես էլ ինքնության խորքային ճգնաժամի:

Բազմամակարդակ տապալման գլխավոր պատճառ եղել են ոչ թե արտաքին դերակատարների պարտադրանքն ու սահմանափակումները (դրանք, որպես կանոն, միշտ կարող են լինել), ինչպես հաճախ ներկայացվում է, այլ այն, որ Հայաստանի Հանրապետությունում չձևավորվեցին ազգային էլիտաներ, փոխարենը ունեցանք լոկ քաղաքական վերնախավ, որը համակարգային առումով, չունենալով ազգային արժեքներ, ռազմավարական մտածողություն, պետական և հանրային շահի գերակայության ընկալում, առաջնորդվում էր բացառապես նեղ խմբային շահով, որի նպատակը ֆինանսական կապիտալի կուտակումն ու իշխանության վերարտադրության ապահովումն էր: Այս արժեքային համակարգի կրող քաղաքական վերնախավի կառավարման ընթացքում սկիզբ դրվեց բաշխման, շարժունակության, լեգիտիմության ճգնաժամերին, որոնք էլ կարճ ժամանակ անց հանգեցրին ամենախորքայինին՝ ինքնության ճգնաժամին:

- **Բաշխման ճգնաժամը** սկիզբ առավ անկախացումից հետո, երբ սկսվեց սեփականաշնորհման գործընթացը, որը տեղի էր ունենում իշխանական հովանավորչությամբ՝ կոպտորեն խախտելով արդարության և արդյունավետության բոլոր սկզբունքները: Վաուչերային սեփականաշնորհման հետևանքով մսխվեց Հայաստանի գրեթե ողջ արդյունաբերական, գիտական և ենթակառուցվածքային ներուժը, որի բացասական ազդեցությունը տարածվեց պետության բոլոր ոլորտների վրա՝ տնտեսությունից և գիտությունից մինչև բանակ:
- **Շարժունակության ճգնաժամը,** որտեղ «սոցիալական վերելակների» հիմքում որպես չափանիշ ընկած էին ոչ թե կադրերի արժանիքները (մերիտոկրատական մոտեցում), ազգային ու պետական շահի սպասարկման կարողությունը, այլ միակ հիմնական պահանջը քաղաքական վերնախավին անձնավորված

հավատարմության ցուցաբերումն էր։ Խախտելով արդարության և արժանապատվության գրեթե բոլոր սկզբունքները՝ այս ամենը հանգեցրեց մեր ժամանակների ամենախորքային խնդրին՝ «ուղեղների արտահոսքին»(brain drain)։ Ուղեղների արտահոսքը պետության արդիականացման ճանապարհին շարունակում է մնալ մեծագույն սպառնալիքն ու մարտահրավերը։

- **Լեգիտիմության ճգնաժամը** վերոնշյալ ճգնաժամերի խորացմանը և ինստիտուցիոնալացմանը զուգահեռ քաղաքական իշխանությունը, գրեթե ամբողջությամբ կորցնելով հասարակության աջակցությունը և ցանկանալով պահպանել իշխանությունը, խեղաթյուրեց պետական և հանրային կյանքի գրեթե բոլոր ինստիտուտները։ Կորցնելով ներքին հենարանը՝ այն հանգեցրեց ուղղակի կախվածության արտաքին դերակատարներից, որոնք էլ դարձան իշխանության լեգիտիմության միակ աղբյուրը։ Սա հանգեցրեց, ոչ թե պետական շահի այլ տվյալ արտաքին դերակատարների շահերի սպասարկմանը, որի դիմաց իշխանությունը ապահովում էր արտաքին լեգիտիմությունն ու վերարտադրվելու հնարավորությունը։ Այս ամենը արմատավորեց և ինստիտուցիոնալացրեց հպատակային արտաքին քաղաքականությունը։
- **Ինքնության ճգնաժամը** ամենախորքայինն է։ այս դեպքում վերոնշյալ ճգնաժամերի հետևանքով ազգն ու պետությունը դուրս են մղվում սեփական առանցքից՝ չունենալով ո'չ գաղափարների ամբողջություն, ո'չ առաքելություն և ո'չ էլ խորքային նպատակներ։ Կորցնում են պատկերացումը սեփական ինքնության վերաբերյալ, ընդհատվում է պատմական շարունակականությունը, խեղաթյուրվում են ինչպես արտաքին աշխարհի վերաբերյալ պատկերացումներն ու ակնկալիքները, այնպես էլ այդ աշխարհում սեփական տեղի և դերի մասին ընկալումները, որին էլ որպես կանոն հաջորդում է այլ պետությունների կամ աշխարհաքաղաքական կենտրոնների կողմից պարտադրված օրակարգի սպասարկումը, որը ընկալվում և ներկայացվում է որպես սեփական և ազգային օրակարգ։

Այս քաղաքականության իրականացման հետևանքով արմատացավ ամենակործանարարը՝ այն, ինչը հաճախ անվանում են «քաղաքակրթական հանցագործություն», որի շրջանակներում մինչ օրս տրամադրվում է մի հայեցակարգ՝ համաձայն որի՝ մենք որպես ազգ կամ պետություն դերակատար չենք և չենք էլ կարող լինել, մենք չունենք բավարար ռեսուրսներ, իսկ մեր ճակատագիրը կախված է «վերին ատյաններից»: Հենց այդ օրակարգի շրջանակներում իրականացվող քաղաքականության և դիսկուրսի հետևանքով **ամրապնդվեց բազմամակարդակ «Հպատակային քաղաքականությունը»**, որը ոչ միայն դրսևորվեց արտաքին, այլ նաև ներքին քաղաքականությունում: Դրա վառ օրինակներից է այն, որ մինչ օրս որպես իշխանության աղբյուր դիտարկվում է ոչ թե ժողովուրդը, այլ արտաքին դերակատարները, իսկ անվտանգության հարցում փորձ է արվում «ճիշտ ընտրություն» կատարել գերտերությունների միջև՝ սեփական պատասխանատվությունը հասցնելով նվազագույնի: Այս մտայնությանը զուգահեռ արմատացած է նաև այն մոտեցումը, որ ՀՀ-ում չեն կարող ձևավորվել նոր քաղաքական ուժ կամ դերակատարներ, որոնք կլինեն նախկին կամ ներկա իշխանությունների վերահսկողությունից դուրս, իսկ ստեղծվելու պարագայում էլ չեն ունենա հաջողելու նվազագույն հնարավորություն առանց վերջիններիս աջակցության:

Քաղաքական վերնախավի միայն խմբային շահի սպասարկումը և դրա հետևանքով, ազգային շահի առանցքի շուրջ պետական և հանրային ինստիտուտների չկայացումը, տարեցտարի ուղեղների արտահոսքը, գիտական, մշակութային և կրթական հետընթացը, պետության անհամաչափ զարգացումն ու գերկենտրոնացումը, հասարակության խորքային բևեռացման և սոցիալական անարդարության արմատավորումը, հանրային համակեցության կանոնների կազմաքանդումը , ինչպես նաև հասարակության անհամերաշխությունն ու պառակտումը հանգեցրին հասարակության աննախադեպ հեղափոխականացվածության, որն էլ հիմք դարձավ 2018թ. բեմականացված գունավոր հեղափոխության համար, որը կարելի է բնորոշել, որպես իշխանության հանձնում:

2018թ. թվացյալ իշխանափոխության հետևանքով ոչ միայն տեղի չունեցավ բովանդակային փոփոխություն, այլ շատ ավելի արագացված կերպով շարունակվեց քաղաքական համակարգի հետընթացքը՝ պետության կազմաքանդումն ու «արտաքին պարտավորությունների» իրականացումն աննախադեպ կործանարար միջոցներով, որն այսօր ուղեկցվում է նաև բացահայտ հակահայկական և հակապետական օրակարգերով և քարոզներով, ընդհուպ մինչև ազգային ինքնության խեղաթյուրում: Այս ամենի հետևանքով հանձնվեց Արցախը, օկուպացվեցին Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքներ, իսկ որպես միջազգայնորեն վիճելի տարածք՝ Արցախի փոխարեն դարձավ Սյունիքը:

Այսպիսով, Հայաստանի երրորդ Հանրապետությունը, փստացի ձևավորվեց մեր կամքից անկախ՝ ժառանգություն հասնելով Խորհրդային Միությունից: Մեր պետության ձևավորման համար մենք չանցանք բարդագույն այն ճանապարհները, որոնցով, որպես կանոն, անցնում են բոլոր ազգերը պետություն կերտելու ճանապարհին: **Մենք չգիտակցեցինք և մինչ օրս էլ չենք գիտակցում պետության արժեքը, քանի որ այն մեզ ուղղակի բաժին հասավ և հենց այդ պատճառով էլ այն մինչ օրս բոլոր իշխանությունների կողմից ընկալվել է որպես ի վերուստ տրված մի բան, որը կարելի է անվերջ մսխել, անվերջ վերցնել:** Այս ողջ ընթացքում քաղաքական վերնախավերը զբաղվել են, ոչ թե պետականաշինությամբ ու զարգացրել ունեցածը, այլ ուղղակի մսխել են մեզ ժառանգություն հասածը, և սա վերաբերում է բացարձակապես բոլոր ոլորտներին՝ ենթակառուցվածքներից և արտադրական հզորություններից մինչև կրթություն և գիտություն: Հենց սա է պատճառը, որ մենք այսօր փաստացի ականատես ենք լինում, թե ինչպես է վերջնականապես մարում մեզ ժառանգություն հասած պետության և ինստիտուտների իներցիան բոլոր առումներով:

Այսօր մենք գործ ունենք նույն քաղաքական համակարգի հետ, որը, ցավոք, պահպանվում է մինչ օրս: **Տարբեր իշխանությունների ժամանակ եղել են տարբեր խոսույթներ, սակայն իրական քաղաքական գործընթացները, առաջնահերթությունները, արժեքները, խաղի կանոնները, քաղաքականության**

**իրականացման ուղղությունն ու տրամաբանությունը եղել են նույնը և անփոփոխ:** Հայաստանի Հանրապետությունում երբեք տեղի չի ունեցել ոչ պալատական հեղաշրջում, ինչպես շատերը բնորոշում են 1998թ. դեպքերը, և ոչ էլ 2018թ-ին եղել է հեղափոխություն: Դրանք եղել են ուղղակի իշխանության հանձնում, որը ապահովել է, ոչ թե պետության, այլ ընդամենը այս համակարգի շարունակականությունը:

**Այսօր ապրում ենք այս քաղաքական համակարգի վերջնական դեգրադացման կուլմինացիոն փուլում, որի դրսևորումը ներկա իշխանությունն է:** Հայաստանի Հանրապետության լինելությունն ու այս քաղաքական համակարգը անհամատեղելի են: Ակնհայտ է, որ այս քաղաքական համակարգը, ի դեմս ներկայիս իշխանության, ազգային անվտանգության մեր առաջնային սպառնալիքն է, որի գործունեությունը ոչ միայն հակապետական է, այլ նաև ուղղված է մեր ինքնության դեմ:

Այս բարդագույն իրավիճակում գայթակղությունը մեծ է կարծելու, թե մեր խնդիրները կարող են արագ լուծվել միայն այս իշխանության հեռացմամբ: Սա մեծագույն մոլորություն է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում այսօր **ՓՈԽՀԱՄԱԶԱՅՆԵՑՎԱԾ ԽՄԲԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ է, որի առանցքը ներկա և նախկին իշխանություններն են իրենց արբանյակներով:** Այս նույն քաղաքական համակարգի մեջ յուրաքանչյուր տեղափոխություն, յուրաքանչյուր փոփոխություն, որը կհանգեցնի նախկին որևէ վարչակարգի կամ նրանց արբանյակների վերարտադրությանը, երբեք չի կարող բերել որակական փոփոխության:

**Այսպիսով, ՀՀ-ը այսօր գտնվում է ոչ միայն քաղաքական, սոցիալական և տնտեսական այլ խորքային ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ճգնաժամում, որտեղ բացակայում է ոչ միայն ազգային փոխհամաձայնության գաղափարը, այլ նաև հետևողականորեն խարխլվում է մեր ինքնությունը՝ վերախմբագրվում է մեր անցյալը, արժեքային համակարգը և վերջնականապես տեղի է ունենում հրաժարում ապագայի նկատմամբ հավակնություններից՝ ամրապնդելով արտաքին գերակայությանը համակերպվելու օրակարգը:**

Այս ամենին զուգահեռ՝ արտաքին աշխարհում տեղի են ունենում խորքային տեղաշարժեր. **ինչպես մեր տարածաշրջանը այնպես էլ ամբողջ աշխարհը խորքային փոփոխությունների փուլ է թևակոխել:** Փոխվում են ոչ միայն պետությունների ազդեցության գոտիները, տնտեսական համակարգերը, այլ նաև միջազգային կարգը և դրա հիմքում ընկած արժեքային համակարգն ու սկզբունքները: 1991թ. ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ կողմից ձևավորված Լիբերալ-Ժողովրդավարական միջազգային կարգը, որտեղ բացարձակ գերիշխող դեր ուներ հենց Միացյալ Նահանգները, փլուզված է: Աճի նոր բևեռը ի դեմս Չինաստանի, շարունակաբար մեծացնում է իր ազդեցությունը աշխարհում՝ ընդլայնվելով դեպի Ասիա, դրան զուգահեռ ձևավորելով «սեփական կարգը»:

Մեր տարածաշրջանում Ռուսաստանի դաշնությունն իր հերթին փոփոխվող միջազգային կարգի պայմաններում մարտահրավեր է նետել Արևմուտքին՝ փորձելով պահպանել իր ազդեցության գոտիները և ամրագրել իր ծանրակշիռ տեղը ձևավորվող նոր իրականությունում: Փաստացի Լիբերալ-ժողովրդավարական միջազգային կարգը փլուզված է, իսկ գերտերությունների շահերի կենտրոնը դարձել են Մերձավոր Արևելքը և Կենտրոնական Ասիան: Ներկայումս միջազգային հարաբերությունների հիմքում ընկած է ուժային քաղաքականությունը (ուժը զսպվում է ուժի միջոցով), որն ուղեկցվում է **Նեոգաղութականությամբ:** Փլուզված միջազգային կարգին փոխարինման են գալիս **ազգային նախագծերը,** իսկ քաղաքականության և միջազգային հարաբերությունների գերակա սուբյեկտ են բացառապես **ազգային պետությունները:**

**Ամփոփելով վերոշարադրյալը՝ փաստենք, որ ինքնության խորքային ճգնաժամի, 44-օրյա պատերազմի, Արցախի հանձնման, նոր միջազգային կարգի և քաղաքակրթական բևեռների ձևավորման, ինչպես նաև տարածաշրջանում արմատական փոփոխությունների հետևանքով ՀՀ անվտանգային և գոյաբանական սպառնալիքների անմիջական առկայությունը այլևս պարտադրում է մեզ, ինքնության պահպանման, անվտանգության և կենսունակության երաշխավորման**

**նկատառումներով հաղթահարել ինքնության ճգնաժամը՝ խորապես վերաիմաստավորելով և վերարժևորելով ազգային տեսլականը, պետության բովանդակությունը և նրա տեղն ու դերը կերպափոխվող աշխարհում:**

Ակնհայտ է, որ մեր առանցքից շեղման, ներքին կազմաքանդման և արտաքին փոփոխությունների հետևանքով հայտնվել ենք այնպիսի իրավիճակում, որտեղ այսօր ստիպված ենք վերահաստատել անգամ սեփական հողում ապրելու մեր իրավունքը: Հետևաբար, **մեր գերխնդիրն է հայկական էլիտայի հավաքագրման միջոցով ճեղքել երեք տասնամյակից ավելի շարունակվող ինքնաոչնչացման տանող քաղաքական այս համակարգը, հաղթահարել ինքնության ճգնաժամը, որից հետո միայն դնել բովանդակությամբ ու արժեբանությամբ նորի՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ձևավորման սկիզբը:** Բացառապես ազգային ուժեղ պետությունը, որ ոչ միայն ձևով այլ առաջին հերթին բովանդակությամբ կլինի ՀԱՅԿԱԿԱՆ, կարող է երաշխավորել ազգի անվտանգությունը, զարգացումը, հարատևումը և իր արժանապատիվ տեղը շարունակ կերպափոխվող աշխարհում՝ պահպանելով ինքնությունն ու յուրատիպությունը:

**Հայկական ուժեղ պետության ձևավորումը պետք է դառնա համայն հայությանը միավորող գաղափարը,** քանի որ ամբողջ աշխարհում սփռված հայերի ազգային ինքնությունը կարող է երաշխավորվել միայն Հայկական Պետության առկայության պարագայում, որի հետ կապերը պետք է լինեն սերտ և ինստիտուցիոնալ:
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ նպատակը հայ ազգի հարատևման, անվտանգ և արժանապատիվ կենսագործունեության երաշխավորումն է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, որտեղ պետությանը զուգահեռ առանցքային նշանակություն և դեր է վերապահված Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ հիմքում ընկած է լինելու ազգային ինքնությունը, համահայկականությունը, արժանապատվությունը և արդարությունը,** իսկ հանրային համակեցության արժեքային հենքը պետք է լինի քրիստոնեական արժեհամակարգը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ գործունեության գերակայություն են սահմանվում Հզոր պետությունը, Անկախ հայրենիքը և Ազատ անհատը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ձևավորման և պետականաշինության գործում անմիջականորեն պետք է ներգրավված լինի սփյուռքը, որը նաև ինստիտուցիոնալ հնարավորություն կստեղծի ազգային ողջ ներուժի համախմբման գործընթացը սկսելու համար:

Հրաժարվելով արտաքին դերակատարների կողմից մեզ «պարտադրված» վեստերնիզացման և օտարածին այլ օրակարգերից՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ շրջանակներում պետք է ձևավորվի պետության արդիականացման և հանրային կյանքի կազմակերպման ԱԶԳԱՅԻՆ մոդելը: Պետք է ձևավորվեն ազգային ինստիտուտներ, որոնց հիմքում ընկած կլինի «Ինտելեկտուալ անկախությունը»:

**ՀԱՅԱԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ հիմնված է 6 սյուների վրա.**

- Մշակույթ
- Կրթություն
- Գիտություն
- Տնտեսություն
- Բանակ
- Բժշկություն

Հաշվի առնելով, որ պետությունը հայրենիքի դրական իրավական ձևն է, իսկ հայրենիքը՝ պետության հոգևոր և ստեղծագործական բովանդակությունը և այն, որ մեր հայրենիքը շատ ավելի մեծ է, քան Հայաստանի Հանրապետության սահմանները, հետևաբար ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ շրջանակներում պետք է ձևավորվեն և կայանան ազգային կենսունակության 2 նետերը.

**• Ազգային անվտանգության ընդլայնված օրակարգը**

- Հայ լինելը պետք է լինի անվտանգ (լինել հայ պետք է նշանակի լինել

պաշտպանված)։

• **Հայկական կապիտալը**

- Հայ լինելը պետք է լինի շահավետ (լինել հայ կնշանակի լինել ապահովված)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ անվտանգության համակարգի հավասարազոր առանցքային բաղադրիչներն են ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ և ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ նյութական և հոգևոր արժեքների հավասարակշռման երաշխավորն է։

**Հայկական Պետության առաջնահերթություններն են՝**

- «Ուղեղների արտահոսքը» կասեցնելը և տարբեր ոլորտներում աշխարհի հայազգի լավագույն մասնագետների՝ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալելը խրախուսելը,
- Սփյուռքի հետ հարաբերությունների ինստիտուցիոնալացումը.
- Ընդերքի աստիճանական ազգայնացումը,
- Դեմոգրաֆիական կտրուկ աճի ապահովումը,
- Հայաստանի Հանրապետության համաչափ զարգացումը՝ առանցքային նշանակություն տալով գյուղական և սահմանապահ համայնքների զարգացմանը,
- ՀՀ 6 այուների շարունակական արդիականացումը և ամրապնդումը,
- Բյուրորատական համակարգում մերիտոկրատական սկզբունքների ներդրումը (միևնույն ժամանակ ապակուսակցականացումը),
- Ազգային գաղափարախոսության մշակումը,
- Արցախահայերի վերադարձի ապահովումը միջազգային իրավունքի իրականացման շրջանակներում։

**Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության սկզբունքները**

- Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում առաջնորդվում է քաղաքական ռեալիզմի սկզբունքներով,
- «կողմնորոշման» քաղաքականությունը փոխարինել «ինքնորոշման» քաղաքականությամբ, այն է՝ ազգային և պետական շահերի հստակ սահմանմանը զուգահեռ հրաժարվել անվտանգության և զարգացման համար գերտերություններին ապավինումից,
- բազմավեկտոր և հավասարակշռված արտաքին քաղաքականության իրականացում,
- Հայաստանի Հանրապետությունը չպետք է առաջնորդվի ՀԱԿԱ-ների քաղաքականությամբ (հակաարևմտականություն, հակառուսականություն և այլն),
- խաղաղության երաշխավորման օրակարգի հիմքում որպես գերակա մեխանիզմ ընկած է ուժային բալանսի վերականգնումն ու հավասարակշռումը (ներառում է նաև փոխադարձ ոչնչացման երաշխավորված օրակարգը)։

**Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության ուղղությունները**

- ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ-ի հետ բազմամակարդակ հարաբերությունների շարունակական խորացում,
- ԵՄ և անդամ պետությունների հետ բազմավեկտոր հարաբերությունների խորացում,
- ԱՄՆ-ի հետ՝ որպես կարևորագույն ռազմավարական գործընկերոջ, հարաբերությունների նոր մակարդակի բարձրացում,
- տարածաշրջանի բարեկամ երկրների (Վրաստան և ԻԻՀ) հետ հարաբերությունների ռազմավարական մակարդակի բարձրացում,

- ՉԺՀ, Հնդկաստանի և ասիական առաջատար այլ պետությունների հետ որակապես նոր հարաբերությունների հաստատում,
- Արաբական աշխարհի բարեկամ պետությունների հետ հարաբերությունների շարունակական զարգացում:

**Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներն են՝**

**Կարճաժամկետ**

Սեփական հողում արժանապատիվ ապրելու իրավունքի վերահաստատումը, խաղաղության ապահովումը և ինքնիշխանության վերականգնումը:

**Միջնաժամկետ**

Խաղաղության երաշխավոր դառնալը՝ իրացնելով Հայաստանի բացառիկ ներուժը լինելու տարածաշրջանում քաղաքակրթությունների երկխոսության առանցքն ու երաշխավորը: Հայաստանը ոչ մի պարագայում չպետք է դիտարկել որպես իսլամական քաղաքակրթության հետ հակամարտող ճակատ:

**Հայկական Պետության ձևավորման տանող ճանապարհի առաջին քայլը իշխանափոխությունն է:** Այն ենթադրում է ոչ միայն գործող իշխանության հեռացում, այլ նաև նախկին իշխանությունների կամ նրանցից ածանցյալ ուժերի վերարտադրության բացառում: Իշխանափոխությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է:

Իշխանափոխությանը հաջորդող քայլերն են՝

**Հայկական Պետության շրջանակներում սահմանված նպատակների և առաջնահերթությունների հետևողական և շարունակական իրականացման նպատակով.**

- Հայկական պետության գաղափարի շուրջ ազգային էլիտայի մեկտեղումը,
- ինքնության ճգնաժամի հաղթահարումը,
- «ընդդեմի» օրակարգից անցումը «հանունի» օրակարգի,

- հասարակությունում սոցիալական կապիտալի վերականգնումը (պառակտվածության վերացում, համերաշխություն և փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորում),
- նախկին-ներկա բոլոր վարչակարգերի կապանքներից ձերբազատումը և նրանց ազդեցության բացառումը քաղաքական զարգացման գործընթացի վրա, այդպիսով նաև նվազագույնի հասցնելով այլ պետությունների միջամտությունը ներքաղաքական կյանքին,
- Հասարակության վերակառուցմանը միտված գործընթացի շրջանակներում տասնամյակների ընթացքում արմատացած կործանարար միֆերի կոտրումը և հաղթահարումը։**Մասնավորապես՝**

1. **անզորության և համակերպման,**
2. **մենք որպես ազգ վատն ենք,**
3. **մենք դժբախտ ենք, քանի որ ապրում ենք այս տարածաշրջանում և ունենք նման թշնամիներ,**
4. **մեր նպատակներն ու հավակնությունները պետք է բխեցնենք մեր ռեսուրսներից,**
5. **մենք թույլ ենք և չունենք բավական ռեսուրսներ,**
6. **միջազգային հանրությունը կերաշխավորի ՀՀ-ի անվտանգությունը,**
7. **քաղաքականությամբ զբաղվելն անբարոյականություն է,**
8. **հպատակային քաղաքականության այլընտրանքի բացակայությունը,**
9. **Հայաստանում նոր փոփոխություններ իրականացնելն անհնար է, քանի որ ողջ ռեսուրսները գտնվում են իշխանության կամ ընդդիմության ձեռքին,**
10. **հայտնվելու է փրկիչ, որը լուծելու է մեր բոլոր խնդիրները։**

**Իշխանափոխությունից անմիջապես հետո իրականացվող առաջին անհրաժեշտ քայլերն են՝**

- մեր ինքնության, մշակույթի և պատմության խեղաթյուրման կամ մերժման ցանկացած գործընթացի կասեցումը (այդ թվում ցեղասպանության իրողությունը հարցականի տակ դնելը),
- «Սյունիքի միջանցքի» և հաղորդակցության ուղիների ապաշրջափակման գործընթացի տրամաբանության և մոտեցումների խորքային վերանայումը,
- կրթության և գիտության ոլորտում ընդունված հակահայկական որոշումների ու ծրագրերի չեղարկումը,
- «Ակադեմիական քաղաք» նախագծի չեղարկումը,
- «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դպրոցների ուսումնական ծրագրերում վերականգնումը,
- օտար էթնիկ անվերահսկելի հոսքերի կառավարումը,
- ներգաղթը խրախուսելու օրենսդրական և ֆինանսական մոտեցումները,
- այլ պետությունների կողմից ֆինանսավորվող և նրանց շահը սպասարկող ուժերի գործունեության սահմանափակումը
- բանկային գաղտնիքի վերականգնումը:

**Իշխանափոխության համար անհրաժեշտ նախապայմանն է՝ ԸՆԴԴԻՄԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդդիմափոխությունը ենթադրում է որակապես նոր ընդդիմության ձևավորում և ներկա իշխանությանը նոր այլընտրանքի ձևավորում, որը դուրս կլինի ներկա - նախկին վարչակարգերի կապանքներից ու վերահսկողությունից թե' գաղափարական և թե' ֆինանսական առումով:

Ընդդիմափոխության արդյունքում պետք է ճեղքվի 30-ից ավելի տարիներ ձգվող ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԽՄԲԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ վրա հիմնված քաղաքական համակարգը և դրվի ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ձևավորման հիմքը:

**Ընդդիմափոխության իրականացման համար անհրաժեշտ է՝**

- Հայկական պետության գաղափարի իրագործման շրջանակներում վեր հանել և մեկտեղել էլիտաներին,
- այս գաղափարի իրագործման համար ձևավորել ինստիտուցիոնալ պլատֆորմ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ սփյուռքում,
- Հայկական պետության գաղափարի շրջանակում լեգիտիմության ապահովում հասարակության հետ շարունակական շփման միջոցով,
- հասարակությամը պարալիզացված պահող վերոնշյալ 10 միֆերի հաղթահարում:

**Մեր գործունեության գաղափարական հենքն է՝**

- քաղաքական հարթությունում՝ ազատականությունը,
- տնտեսական հարթությունում՝ սոցիալական մոտեցումը,
- մշակութային հարթությունում՝ պահպանողականությունը:

ԱՅՍՊԻՍՈՎ՝

**Հայկական Պետականության ձևավորման ճանապարհին պետք է առաջնորդվենք՝**

**«Անենք անհրաժեշտը, հետո հնարավորը և հանկարծ կտեսնենք, թե ինչպես ենք իրականացնում անհնարինը»** կարգախոսով: